

ԵՐԶԱՆԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ, Հայոց շարժումային լեզվի բառարան (շարժութարան), Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 2003, 688 էջ:

Տպագրվել է Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության միջոցներով

Երևանի պետական համալսարանի հրատարակչությունը լույս է ընծայել բանասիրական գիտությունների դոկտոր Երջանիկ Գևորգյանի «Հայոց շարժումային լեզվի բառարան (շարժութարան)»-ը: Վերնագրից էլ երևում է, որ այն երկու կերպ է բնութագրվում. շարժութարան է, որովհետև պարունակում է հայ ժողովրդի մշտական գործածության 646 շարժույթ (կիներմա): Դրանք այնպիսի շարժումներ են, որ ընդունված են որևէ հանրության կողմից և գործածվում են հասկացություն, գաղափար, հույզ, զգացմունք, երբեմն՝ ամբողջական միտք հաղորդելու նպատակով: Ծարժույթներն արտահայտվում են հինգ եղանակով. շարժանքներ (ծեստ)՝ «ձեռքով կանչել», «ուսերը թոթվել», «գլխով համաձայնության կամ անհամաձայնության նշան անել», «մեկի ձեռքը սեղմել», մարմնաշարժանքներ (ամբողջ մարմնով կատարվող շարժումներ)՝ «նրստած տեղից վեր թռչել», «կանգնած վիճակում ոտքից ոտք ճռնվել» (երկմտել, շփոթվել), «թռչկոտել» (խիստ ուրախանալ), «մեկին վեր-վեր մետել» (ցնծությանը գովել), «գոտկանտեղից խոնարհվել», կեցվածքներ՝ «ձեռքերը կրծքին խաչել», «գլուխը ձեռքերի մեջ առած նստել», «ձեռքը ճակատին նստել» (կանգնած լինել), «գլուխը կրծքին խոնարհած լինել», «ծունկ չոքել», դիմախաղեր՝ «ժպտալ», «այքով անել», «հոնքերը կիտել», «դեմքը ծամածոնել», «հոնքերը վեր բարձրացնել», «այքերը ոլորել»: Եվ քայլվածքներ՝ հարբածի, հաստատուն, երկյուղած, վեհաշուք, խրոխտ:

Բառարան է, քանզի արտացոլում է յուրաքանչյուր շարժույթ բառերի ու բառակապակցությունների մեջ, որոնք մատուցվում են ըստ այբբենական դասավորության: Վերը բերված օրինակները հենց այդպիսիք են:

Ծարժութարանը պատկերազարդ է. շարժույթների մեծ մասը լուսաբանված են նկարներով՝ դրանց կատարման տեխնիկան և արտահայտած իմաստն ավելի մատչելի դարձնելու նպատակով: Պատկերների

հեղինակն է գրքերի նկարազարդման մեր փորձառու վարպետներից մեկը՝ Գրիգոր Մարիկյանը: Ինչ ասել կուզի, այսպիսի մեծածավալ նկարազարդումը երկարատև աշխատանքի և արվեստագետի բարձր ճաշակի, ստեղծագործական մտքի արդյունք կարող է լինել:

Ընթերցողն իր ցանկացած շարժույթը գրքում կարող է գտնել երկու ճանապարհով. եթե հայտնի է շարժասական (ծեստիկուլյացիոն) բառը կամ բառակապակցությունը, ապա վերջիններս պետք է փնտրել այբբենական հաջորդականության շարքում: Բայց կարող է հայտնի լինել շարժույթը՝ իր կատարման տեխնիկայով և արտահայտած իմաստով, իսկ արտացոլող բառը՝ ոչ: Այս դեպքում հարկավոր է դիմել գրքի վերջում զետեղված շարժույթների իմաստային ցանկին, որտեղ, ըստ այբբենական կարգի դասավորված են հասկացություններ, գործողություններ, հատկանիշներ, զգացմունքներ նշանակող բառերը, ինչպես՝ «ազնվություն, ալարկոտություն, ակամածանք, աղաչանք, աղոթել... և այսպես մինչև վերջ» օղային համբույր, օղի, օճառ, օրհնել, օրորվել: Գրքում ամեն շարժույթ ունի իր թվահամարը, և ցանկում յուրաքանչյուր իմաստի հետ նշվում են դրան առնչվող բոլոր շարժույթները ըստ ունեցած թվահամարի: Օրինակ՝ Ուրախանալ՝ 2.1, 16, 17, 24, 67... և մյուսները (թվով 37): Օրհնել՝ 2. 75, 159: Բոլոր շարժույթներն իմաստային ցանկերով ներկայացնելը, անշուշտ, գրքի արժանիքներից մեկն է, որովհետև ամեն ցանկ համանիշային շարք է, ուրեմն սեղմ ներկայացված է նաև մեր շարժասական հոմանիշությունը:

Բառարան (շարժութարան)ը ստեղծվել է երկարամյա աշխատանքով ու խնամքով: Կատարման տեխնիկայի առումով շարժույթը տարբերակներ ունի, նախ բացատրություն է տալիս, ապա տրվում են իմաստները: Ցուրաքանչյուր իմաստի համար բերվում են վկայություններ գրավոր աղբյուրներից,

որի համար հեղինակը կարողացել է հսկայա-
ծավալ գեղարվեստական գրականություն
Խ. Աբովյանից մինչև մեր օրերը: Գրքի մա-
սին ավելի լայն պատկերացում տալու հա-
մար ներկայացնենք մեկ օրինակ:

«խաչակնքել» շարժանքը (ծեստ) հա-
յոց լեզվում արտացոլված է հետևյալ բառե-
րով ու բառակապակցություններով՝ խա-
չակնքել, դեմքը խաչակնքել, դեմքին խաչ-
հանել (խաչ քաշել), երեսը խաչակնքել, երե-
սը խաչահանել, երեսին խաչակնքել... Եվ
այսպես երեսունից ավելի բառային միավոր:
Հեղինակը ցույց է տալիս, որ «խաչակնքե-
լ» շարժանքը մեր ժողովրդի մեջ գործած-
վում է յոթ նշանակությամբ. 1. Աստվածա-
պաշտություն, կրոնական ջերմեռանդու-
թյուն արտահայտել: «Մենք խաչակնքե-
ցինք, երբ Սևանա լճի կղզում նշմարեցինք
հնադարյան վանքի խաղը» (Լևոն-Ջավեն
Սուրմեյան): 2. Իր քրիստոնյա լինելը հա-
վաստիացնել: «Ո՞վ եք, ի՞նչ եք կամենում...»-
հարցրեց Մկրտիչը: Մի՞թե դուք հայեր եք:-
Հայ քրիստոնյա, Գրիգոր Լուսավորիչ,- կրկը-
նեցին նոքա և երեսներին *խաչ քաշեցին*
(Պերն Պոռոյան): 3. Ասածը հաստատել,
երդվել: «Իրավ կրեսմ, չեմ դպնիր քեզի, կու-
զե՞ս երդում ընեմ: Ահա՛, *խաչ կհանեմ*, ը-
սավ ու *խաչակնքեց*» (Հակոբ ՄՃճուրի): 4.
Ինքն իրեն քաջալերել: «Դեռ մինչև խոր ծե-
րություն, հիսնամյա փորձառությունը ուսե-
րին, յուրաքանչյուր բեմ մտնելիս, նա *խա-
չակնքում էր երեսը*, ահ ու դողով սկսում
դերն...» (Պահարեն): 5. Օրհնել, չարը խա-
փանել: «Համբարում էր միայն հայերեն և
միշտ տասներեք թվին հասնելու ժամանակ
երեսին խաչակնքում էր, որ չարը խափան-
վի» (Րաֆֆի): 6. Անակնկալի գալ, զարմա-
նալ: «Առաջին սայլապանը, նկատելով ճա-
նապարհին ընկած նորածնի բարտրը, զար-
մանքից *երեսը խաչակնքում* ու «Հիսուս
Քրիստոս» է մրմնջում» (Գուրգեն Ջանիբեկ-
յան): 7. Վախենալ, երկյուղ զգալ: «Երբ ես
ներս մտա, հորեղբորս աղջկա սկեսուրը վա-
խից վեր թռավ և սկսեց *երեսին խաչ հանել*»
(Վահան Գրիգորյան):

Այժմ, թերևս, կարևոր մի հարց. գործ-
նականում ո՞ւմ կարող է օգտակար լինել
սույն բառաբան-շարժութարանը: Նախ, ի-
հարկե՞ս, *բանասերներին*՝ գրականության,
ժողովրդական բանահյուսության և հնչյու-
նական լեզվի հետ ունեցած ուղղակի կապե-
րի շնորհիվ, *թատերագետներին* (շարժու-
մային լեզուն դերասանական խաղի անբա-
ժանելի մասն է), *քանդակագործներին* ու

Ակարիչներին, որոնց խնդիրն է պատկերել
մարդուն ու նրա հույզերը՝ շարժման մեջ քա-
րացնելով նրանց, հայ և այլազգի *մանկա-
վարժներին*, որոնք նախ երեխաներին, ա-
պա ուսանողներին սովորեցնում են մայրե-
նի և այլ ժողովուրդների շարժասությունը,
առանց որի անհնար կլինի օտար լեզվով
խոսողին լիարժեք հասկանալը. *արատա-
բաններին*. Ժողովրդի շարժասությունը խո-
լունհամրերի շարժասովի մի էական մասն է.
հոգեբաններին ու հատկապես *խոշոր գոր-
ծարարներին*: Նրանք շարժումային լեզվի
միջոցով կարողում են դիմացինի (մասնավո-
րապես գործընկերոջ) զգացումները, ար-
տահայտում իրենցը, գնահատում իրավի-
ճակը, դրանից ելնելով՝ ակնկալվող հեռան-
կարները: Եվ վերջապես, ամենալայն զանգ-
վածներին: Հնչյունային հայերենից հետո
շարժումային լեզուն մեր ամենօրյա հաղոր-
դակցման երկրորդ լեզուն է, որը շատ հա-
ճախ դառնում է միակը և փոխարինում է
խոսքին: Հիշենք, թեկուզ, հաղորդակցվող-
ների միմյանցից հեռու լինելը, հուզմունքից
խոսել չկարողանալը, բերանն ու լեզուն
զբաղված լինելը (հեռախոսով խոսելիս,
լվացվելիս, ուտելիս ևն), խոսելն արգելված
լինելը, գուշավորությունն ու գաղտնիու-
թյունը ևն:

Քաղաքակիրթ քիչ ժողովուրդներ ու-
նեն շարժումային լեզվի բառարան: Ունե-
ցողներից են՝ իտալացիները, ֆրանսիացի-
ները, ճապոնացիները, հնդիկները, հարա-
վամերիկյան ժողովուրդները՝ մեկ ընդհա-
նոր բառարանով, ամերիկյան հնդկացինե-
րը՝ մեկ ընդհանուր շարժակնքով, որը մի
ամբողջական համակարգ է՝ ընդարձակ
բառապաշարով ու քերականությամբ, ա-
րաբները, ռուսները, անգլիացիները և էլի մի
քանիսը: Սույն աշխատությունը հայոց շար-
ժումային լեզվի բառարանագրման առաջին
փորձն է:

«Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկու-
թյան հայկական մասնաճյուղի տնօրեն Զա-
վեն Եկավյանի աջակցությամբ, համալսա-
րանի հրատարակչության աշխատակիցնե-
րի, գիտական խմբագիր, բանասիրության
դոկտոր Ա. Մաղոյանի ջանքերով ըմբռնո-
ղի սեղանին է դրվել բարձրորակ և անպայ-
ման ուշագրավ լեզվաբանական մի աշխա-
տություն, որի կարիքը զգալի էր, և որից կա-
րող են օգտվել լեզվաբանները, մանկավարժ-
ները, թատերական գործիչները և ընդհա-
նորապես ընթերցող հասարակայնությունը:

Ս. Գ. ԱՄԻՐՋԱՆՅԱՆ